ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ

(Մենդյան 70-ամյակի առթիվ)

Ակադեմիկոս Գ. Խանջյանի արվեստը լուսավորված է եղել մի հիմնական գաղափարով, որը և դարձել է վարպետի ողջ ստեղծագործության հիմնահարցը՝ արտահայտել Հայաստանի պատմական անցյալը, պարզել իր համար և ցույց տալ աշխարհին նրա մշակույթի ձևավորման գծերն ու ներքին անկրկնելի էությունը:

Կյանքի տարբեր փուլերում նա հասել է ստեղծագործական այնպիսի հաղթանակների, որոնք բնորոշում են նրա ողջ էությունը, կատարյալը նվաճելու նրա անպարփակ նվիրումը:



Այդպիսին էր Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի նկարագարդումը: Դա 1959 թվականին էր, հայ ժողովրդի ազատության կանչն էր այդ գործերում: Երկրորդը (1965 թ.) կապված էր ժողովրդի նակատագրի մի ողբերգական թվականի՝ 1915-ի Հայոց Մեծ Եղեռնի հիսնամյա տարելիցի ոգեկոչման հետ: Այն իր արտացոլումը գտավ Պարույր Սևակի «Անլռելի Զանգակատուն» պոեմի նկարագարդումներում: Երրորդը (1981 թ.)՝ «Հայոց Այբուբեն» և «Վարդանանք» գորելենների համար պատրաստված ստվարաթղթերը: Դրանք կամրջում էին ժողովրդի անցյալն ու ներկան, անցած ճանապարհը և վաղվա հավատի հույսը: Եվ գլխավորը՝ ուժը:

Գրիգոր Խանջյանի գործերի համաժողովրդական ընդունելությունը պահանջում է դուրս գալ կերպարվեստի վերլուծության սովորական շրջանակներից և պատմամշակութային ոլորտների ընդհանուր սաղմի մեջ տեսնել Խանջյանի ստեղծագործության տեղն ու բնույթը արդի գեղարվեստական անդաստանում:

Հայոց պատմության տարբեր դրվագների նկատմամբ Խանջյանի վերաբերմունքը սոսկ անցյալով տարվելու հրապույր չէ: Նրա ստեղծագործությունները ծառայում են որոշակի գաղափարի մարմնավորման: Խանջյանի աշխատանքները կարելի է վերագրել XX դարի արվեստի գլուխգործոցներին հատուկ ծրագրային գծին: Անկախ ստեղծագործական ուղղություններից, արտահայտման լեզվից՝ այդ տեսանկյունից կարելի է հարազատություն գտնել միմյանցից հեռու այնպիսի ստեղծագործություններում, ինչպիսիք են Պիկասոյի Գեռնիկան, Ռուշի Miserere շարքը, Շոստակովիչի Լենինգրադյան Սիմֆոնիան: Մեր դարի ծրագրային լավագույն ստեղծագործությունները բովանդակում են ողբերգականի վերապրումը, կոչ անում պահպանելու մարդուման ոգին: Այդ հատկանիշներով են բնորոշվում Գրիգոր Խանջյանի աշխատանքները:

Հայ ժողովրդի բշվառ և ողբերգական անցյալը պատկերելը միայն նկարչին կսահմանափակեր «նեղ» շրջանակում, զուցե և հոգեկան արձագանքներ առաջացնող, սակայն արձանագրողի սահմաններում մնացող դիտորդ: Հայոց պատմության վավերապատումները արտահայտված են և պոեզիայում, իսկ ոչ հեռավոր անցյալը ապրում է յուրաքանչյուր ընտանիքի հակատագրում: Աշխարհով մեկ սփռված հայերի 1915 թ. օսմանյան կառավարության կողմից մտահղացված Մեծ Եղեռնի ականատես վկաները ժողովրդի մշտաբորբ արյունածոր հիշո-

զությունն են: Ժողովրդի անցած ուղուն հայել այսօրվա քաղաքացու և հայ մարդու դիրքերից, երկրի պատմական փորձից՝ այսպիսին է նկարչի խնդիրը: Ձկորցնելով ողբերգականի ապրումների սրությունը, նա, շնորհիվ իր անհատականության, կարողացավ ազգերի ուղին մեկտեղել պատմության լավատեսական ընկալման հետ: Այդ դիրքորոշումը կարելի է սխրանք համարել:

Մարդու սխրանքով է պայմանավորվում ժողովրդի վաղվա օրը: Այդ գաղափարը, ղեկավարելով խանջյանի լավագույն աշխատանքներում, հայկական կերպարվեստում նրա համար հատուկ պատվանդան է ստեղծել, որոշել նրա տեղը: Նկարչին ոգևորող գաղափարը համապատասխանում է ժողովրդական պատկերացումներին:

Գրիգոր Խանջյանի աշխատանքները սոսկ պատմական նյութի, բեկուզ և յուրօրինակ ծրագրի, մարմնավորման մեջ չեն միայն: Նրա արվեստը ուրիշ արժանիք էլ ունի, որոնցից առանձնապես հետաքրքիր է թվում կապը հայկական զեղանկարչության «բեմատիկ հորինվածքի» զարգացման հետ: Թեմատիկ մտահղացումները իրականացվել են տարբեր մակարդակներով, կենսական տարբեր նյութերի մշակումով: Մի կողմից կենդանի փաստի, «կյանքի ղեկավարի» արտացոլում, մյուս կողմից՝ այլաբանական քնույթ կրող կերպարներով իրականության արտացոլում, երևակայականի, բատերայնացվածի ցուցադրում:

Ինչպիսի՞ն էր նկարչի ստեղծագործական մեթոդը, որ թույլ տվեց արտահայտել իր ժամանակը այդքան յուրօրինակ և տպավորիչ: Հիշատակված աշխատանքներում Գրիգոր Խանջյանը դիմել է յուրաքանչյուրին հայտնի դասագրքային նյութերի բովանդակությանը: Հայաստանում չկա մի մարդ, որը զբաղվում անցած չլինի Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին», չկա մի մարդ, որ չիմանա Կոմիտասի նշանակությունը և երգահանի Էլեոնորյան նակատագիրը: Այո՛, դժվար է գտնել մեկին, որը հափշտակված չլինի Վարդանանքով, հայ ժողովրդի բախտը որոշող 451 թ. Ավարայրի նակատամարտով:

Նկարիչը վերցրել է վերապրած, մանկուց հայտնի նյութ: Այդ իմաստով նա իրեն առանձնապես բարենպաստ վիճակում է դրել, որը հատուկ էր հին վարպետներին՝ դիմել ավետարանական, աստվածաշնչյան կամ դիցաբանական նյութերի: Սակայն այստեղ կարևորն այն էր, թե նրանց կերպարանքները համապատասխանո՞ւմ էին արդյոք երևակայության մեջ ստեղծվածներին, ինչպես է, որ հայոց պատմության և մշակույթի հերոսները Գրիգոր Խանջյանի աշխատանքներում ստանում էին այդքան անսխալ, մեծամասնության պատկերացումներին համապատասխանող մարմնավորում:

Հովհ. Թումանյանի «Լոռեցի Սամո» պոեմի նկարագրություններում (1936—1937) առաջին անգամ ի հայտ եկավ հեղինակի խառնվածքի բնորոշ գիծը՝ ծայրահեղ լարվածությանը ընդառաջ գնալու նրա ընդունակությունը, զգացմունքները հուզավառ մերկությամբ արտահայտելու հնարավորությունը: «Լոռեցի Սամո» պոեմում այն արտահայտված էր մինչև ցնորված հերոսի սրընթաց փախուստը դեպի գիշեր, դեպի դիվաշխարհ:

Նշենք մի կարևոր հանգամանք ևս. 1970-ական թթ. աշխատանքները Խանջյանի համար նյութի տիրապետման դպրոց էին նաև, նա դառնում է գունակավոր՝ պաստելով, նկարչության տաղանդավոր վարպետ: Տեխնիկական այդ հնարքով 1970-ականների վերջին, 1980-ականների սկզբին Խանջյանը պատրաստում է մեծ ստվարաթղթեր «Հայոց Այբուբեն» և «Վարդանանք» գոբելենների համար:

Ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին Խանջյանի ստվարաթղթերը և դրանց համար նախապատրաստական նկարները, 1981 թ. հունիսին դեպի իրեն էր ձգում անհամար մարդկանց: Կարելի էր տեսնել մարդկային անսպառ մի գետ. «Հայոց Այբուբենը» և «Վարդանանքը» դիպել էին սրտի լարերի, դրանք հայտնաբերել էր նկարիչը, նա էլ զարկել էր այդ լարերին, միավորել բոլորին: Բնական էր թենքադրել, որ Գրիգոր Խանջյանը ստեղծել էր առանձնահատուկ բնույթի ստեղծագործություն, որը նախանշում է մի ընդհանուր՝ հայրենասիրական ծրագիր, միավորելով մարդկանց մի որոշակի միասնության մեջ: Այդ նկարներին սպասում էին, նկարիչն իր աշխատանքով հագեցնում էր վաղեմի ծարավը: Թեման ազգային ինքնորոշման՝ հայերի, որպես ժողովրդի, իր լեզվով, հավատով, մշակույթով, հողով առանձնացման վերապատումն է:

Գրիգոր Խանջյանի ստվարաթղթերի բեմատիկ ընտրության նշգրտությունը հաջողության աղբյուրներից մեկն էր: Սակայն մեկնաբանությունը ևս պետք է ապահովեր լրիվ «ընդգրկումը»: Երբ պատմության այդպիսի իրադարձություններին դիմում է ժամանակակից վարպետը, ապա սպասելի է ոճավորում, խաղ, բատերայնացում, իրավինակի և միջավայրի նշգրիտ վերաստեղ-

ծումն ըստ վավերագրերի և իրողությունների, այսպես ասած «պատմական համոզչություն»: Նկարիչը ճիշտ էր ընտրել ֆայլը՝ «Վարդանանքում» գործող անձ էր դարձրել հայ մշակույթի խոշորագույն գործիչներին, հատկապես նրանց, ում գործն ու նպատակիրը համապատասխանում էին առասպել դարձած իրադարձության՝ ժողովրդային գիտակցության ամենամաս մեկնաբանությանը: Ով որ մաս ուներ Հայաստանի ճակատագրում՝ նա մասնակցել է ճակատամարտին: Դա էլ հենց ստվարաթղթի գլխավոր գաղափարն էր, որը շարժեց մարդկանց հետաքրքրությունը, գտավ հոգեկան արձագանք: Առանձնակի պետք է նշել նկարի, թերևս, ամենաուժեղ հատվածը՝ իր, նկարչի դեմքը, ճակատամարտի մեջ մխրճված նրա դիմանկարը. դա մասնակցի դեմք է: Խանջյանը ղեկավարվել է անցյալի գեղանկարչության բարձրագույն նմուշներով, ընդ որում ոչ բառացիորեն օգտագործելով դրանք:

Հանդիսատեսը ոչ թե պարզապես որոնում ու գտնում էր ստվարաթղթի վրա իր սիրելի գրողներին և նկարիչներին, պատմիչներին, բանաստեղծներին, նրանց ում ճանաչում էր մանկուց, ով օրինակ էր ծառայում, ում կյանքի սխրանքը պատանեկությունից հուզել է, այլ նաև մոտենում էին նկարչին, հարցնում. «Իսկ ո՞ւր է այսինքը»: «Ո՞ւր է զորավար Անդրանիկը». հարցը տրվում էր այնպիսի համառությամբ, այնքան տարբեր մարդկանց կողմից, որ նկարիչը վարդանի զինվորներից մեկին արտահայտությամբ նմանեցրեց փառապանծ գեներալին: Ժողովրդի հիշողությունը, իր սրտի խորանում պահպանել էր զորավարի կերպարը, նրա սխրանքը: Եվ որտե՞ղ պետք է լիներ Անդրանիկը, եթե ոչ այս նկարում:

Դասական գոբելենի սկզբունքով գործելու համար ստվարաթուղթ-նմուշի տեսքով փորձարկումն անցնելուց հետո «Հայոց Այբուբենն» ու «Վարդանանքը» որպես գոբելեններ կապրեն էջմիածնի Կարոզիկոսարանի հանդիսությունների դահլիճում, որմնանկարների տեսքով՝ երևանում կառուցվող մշակութային դահլիճներից մեկում: Այդ որմնանկարների վրա է Գրիգոր Խանջյանն աշխատում հիմա: Հին խոսք է, որ հաջողությունը՝ հաջողություն է ծնում: Ճանաչումը պարտավորեցնում է նկարչին, ի մի բերում նրա բոլոր ուժերը և ստիպում անշեղորեն գնալ դեպի ստեղծագործական նոր հաղթանակ, նոր բարձունք:

Գրիգոր Խանջյանի աշխատանքները գրքի պատկերազարդման բնագավառում, հաստոցային գրաֆիկայում, կորոզային գեղանկարչության ասպարեզում (գոբելեններ և որմնանկարներ), նրա գեղանկարչական աշխատանքները և, վերջապես, գործուն մասնակցությունը հանրապետությունում ավանդական արհեստների վերածնման գործին, առանձին առարկաների նախագծերը և ամբողջական արահների ձևավորումը նրա անվան շուրջը ստեղծել են իսկական վարպետին արժանի մի սիրո շղթա:

Գրիգոր Խանջյանի՝ նկարչի և քաղաքացու, մեր կերպարվեստի արժանավոր ներկայացուցիչներից մեկի համար բնորոշ են, նախ և առաջ, հայրենասիրական գաղափարների պարտոը և աշխարհում լուսավոր սկզբի հաղթանակի հավատը: Վարպետի լավագույն աշխատանքներում բացահայտվել է նրա խառնվածքի ամենաուժեղ գիծը՝ անձամբ վերապրած, զգացած վերաբերմունքը համաժողովրդական հնչեղության բեմաների, համաժողովրդական գործի նկատմամբ: Գրիգոր Խանջյանի՝ բոլորին հասցեագրված արվեստը հիրավի, համընդհանուր ճանաչում է գտել: Նրա կյանքի հավատամքը՝ ժողովրդի իսկական որդու խոստովանությամբ, հավերժական երթի ազնիվ մշակի առաքելությունն է:

Արվեստագիտության դոկտոր Ն. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ